ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՒՍԱՆԵԼԻ, ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Արտակարգ դեպք

à í Çñ³½»Ï í³Í ¿, Ý³ å³ßïå³Ýí³Í ¿

URL:http://www.emergency.am, E-mail: tert@emergency.am

N 34 (259)

26.9.08-2.10.08

Շաբաթաթերթ

Քրոնիկոն էջ 2, 3

Միջազգային էջ 2

Ու՞մ ջրաղացին են ջուր լցնում «Երեւան-Ջրում» էջ 3

Կառավարում շվեդական ձեւով էջ 5

Սպանված է Ջոն Քենեդիի մարդասպանը էջ 6

Ճակատագրի բավիղներում էջ 6

Արտակարգ ժամանց էջ 8

Գինը 100 դրամ

¸»åÇ ÉÛ³éÝ Ø³ëÇë

Հինգ հայ, քրիստոնյա, պատանեկությունից երազանք ունեին Արարատի բարձունքից նայել Նոյի ոտք դրած տեղերին: Օրեր առաջ նրանց երազանքն իրականություն դարձավ: Ուխտագնացությո՞ւն էր: Այո: Ուխտագնացություն, որի սկիզբն ու վերջը Ծիծեռնակաբերդում էր: Գիտակա՞ն նպատակ ուներ վերելքը: Այո, ցանկանում էին Նոյյան տապանի հետ կապված պատմության՝ առասպել-իրականություն սահմանագիծը ճշտել...

Սակայն, էականը դա չէ, քանի որ այս անգամ նույնպես՝ տապանը նոր տաշեղ չավելացրեց իր գոյության կողմնակիցների նժարին: Ի վերջո, մարդկության փրկության գաղափարը՝ միայն ֆիզիկական հարթության մեջ չէ, որ հարկ է փնտրել:

Այս վերելքի մասին Արմեն Չիլինգարյանի հետ հարցազրույցը կներկայացնենք թերթի հաջորդ համարում:

Պետրոսյանցի, Յովանովիչի եւ խաղաղասեր ատոմի մասին

«Խաղաղ ատոմի օրը»

2005 թվականի սեպտեմբերի 28-ից ի վեր՝ ՌԴ նախագահի հրամանագրով Ռուսաստանում նշվում է ատոմային արդյունաբերության աշխատակիցների մասնագիտական տոնը:

1942 թ. այդ օրն է ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեն հրապարակում «Ուրանի հետ կապված աշխատանքների կազմակերպման մասին» հրամանը եւ հավանություն տալիս՝ Գիտությունների ակադեմիային կից հատուկ միջուկային լաբորատորիայի ստեղծման գաղափարին:

Ատոմային արդյունաբերությունը համարվում է երկրի տնտեսության առանցքային եւ ռազմավարական նշանակության ոլորտներից մեկը, որի զարգացումը հայտնվում է պետության ուշադրության կենտրոնում:

***

Հայաստանում ատոմային էլեկտրակայան կառուցելու գաղափարն առաջինն առաջ քաշեց ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Զարոբյանը 1964 թվականին: Հանրապետության ջրային եւ օրգանական վառելիքի ռեսուրսների սակավության պայմաններում էլեկտրաէներգիայի անկախ ու հուսալի աղբյուր ունենալու անհրաժեշտությունն օրախնդիր էր դարձել: Նման աղբյուրը հնարավորություն կտար, որ Հայաստանը ոչ միայն զարգացներ արդյունաբերությունը, այլեւ փրկեր Սեւանա լիճն էկոլոգիական աղետից: Նախարարների խորհրդի եւ ՀԿԿ կենտկոմի 1967 թվականի օգոստոսի համատեղ նիստում կայացվեց վերջնական որոշում. Հայաստանը պետք է ունենա ատոմային էլեկտրակայան:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 4-ñ¹ ¿çáõÙ

²ÝÑ³Ûï ¿ §·ÇÃ»ñÁ¦, ³ÝÍ³Ûñ ¿ áõÕÇÝ

Սեպտեմբերի 10-ին Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի սահմանագծին գտնվող Մեծ հադրոնային կոլայդերի առաջին փորձարկումից հետո աշխարհում աղմուկ բարձրացավ, որ սարքի միջոցով կատարվող գիտափորձերը մեծ աղետի կարող են հանգեցնել:

Ա. Ի. Ալիխանյանի անվան Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասատրյանի համոզմամբ՝ աղմուկն անհիմն է, քանի որ կոլայդերը միանգամայն անվտանգ է: Դեռ 2003 թվականին հադրոնային արագացուցիչի ստեղծմամբ զբաղվող Միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպության (ՄՀԵԿ) լաբորատորիայում անկախ փորձագետների հանձնաժողովն ուսումնասիրել է կոլայդերի հնարավոր բոլոր վտանգներն ու եզրակացրել, որ անհանգստանալու հարկ չկա, որ կոլայդերն անվտանգ է: Իրականում կոլայդերում ստացվող բոլոր էներգիաները եւ կատարվող բոլոր ֆիզիկական պրոցեսները բնության մեջ կան: «Կարելի է հաշվել ու տեսնել, որ երկրի գոյության ընթացքում մոտավորապես մեկ միլիոն անգամ ավելի շատ այդ կարգի մասնիկներ են երկիրը ռմբակոծել, քան կարող է Մեծ հադրոնային կոլայդերը իր ամբողջ գոյության ընթացքում արտադրել», - ասում է Հրաչյա Ասատրյանը: Կոլայդերում կա միայն ճառագայթման վտանգ, բայց 100 մետր խորության վրա կառուցված սարքը դրանից էլ է պաշտպանված: ՄՀԵԿ գիտնականների հաշվարկումները ցույց են տվել, որ շրջակայքում ընդհանուր ռադիացիոն ֆոնը կոլայդերի գործունեության արդյունքում կբարձրանա մեկ տասնորդական տոկոս, ինչը, Հրաչյա Ասատրյանի հավաստմամբ, չնչին ցուցանիշ է: Անկախ փորձագետների հանձնաժողովը եզրակացրել է, որ կոլայդերի պատճառով սեւ անցքերի առաջացումը նույնպես անհնար է:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 7-ñ¹ ¿çáõÙ

«Էլիտ գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

ԱՆՑԱԾ ՇԱԲԱԹ
.. ՔՐՈՆԻԿՈՆ ..

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ավտոպատահարներ

Սեպտեմբերի 21-ին Գորիս-Երեւան ավտոճանապարհի 4-րդ կմ-ին, դեռեւս չպարզված հանգամանքներում, «Ֆորդ

տրանզիտ» մակնիշի 883 SU 25 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը, ինչի հետեւանքով ավտոմեքենայի վարորդ, Գորիսի բնակիչ, 1984 թ. ծնված Արա Սարգսյանը ստացել է թեթեւ մարմնական վնասվածքներ եւ դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարների կողմից տեղափոխվել քաղաքի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

***

Սեպտեմբերի 24-ին Գորիս-Երեւան ավտոճանապարհի 7-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Վոլվո» մակնիշի ՏԵՆ 12299 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ ընկել ձորը, ինչի հետեւանքով վարորդ, Իրանի քաղաքացի, 1965 թ. ծնված Ավդոզա Հաճնիա Ալիևը զոհվել է:

Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարները դիակը դուրս են բերել ձորից:

Դռան հետեւում

Սեպտեմբերի 20-ին, ժամը 19.27-ին ահազանգ է ստացվել, որ Վանաձորի Գ. Նժդեհի փողոցի 6 շենքի 35-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան զանգերին, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները, բացելով բնակարանի դուռը, հայտնաբերել են տանտիրուհու՝ 1941 թ. ծնված Լարիսա Ղարագյոզյանի դին եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Բախվել են գազատար խողովակին

Սեպտեմբերի 20-ին Երեւանի Կենտրոնական գերեզմանատան սկզբնամասում «Օպել» մակնիշի 13 OU 281 պետհամարանիշով ավտոմեքենան բախվել է գազատար խողովակին, ինչի հետեւանքով տեղի է ունեցել գազի արտահոսք:

Դեպքի վայր մեկնած՝ գազի վթարավերականգնողական ծառայության աշխատակիցները, վերացրել են վթարը:

***

Սեպտեմբերի 23-ին, ժամը 21.00-ի սահմաններում Արարատի մարզի Ոսկետապ գյուղում «ԿամԱԶ» մակնիշի մի ավտոմեքենա բախվել է միջին ճնշման գազատար խողովակին, ինչի հետեւանքով տեղի է ունեցել գազի արտահոսք:

Դեպքի վայր մեկնած՝ Վեդիի 1-04 ծառայության աշխատակիցները, վերացրել են արտահոսքը:

Վտանգը վերացվեց

Սեպտեմբերի 24-ին, ժամը 11.44-ին ահազանգ է տացվել, որ Նոր Նորք համայնքի 12-րդ փողոցում գտնվող թիվ 157 դպրոցի տանիքի մետաղյա կառուցվածքները կախվել եւ սպառնում են ընկնել:

Դեպքի վայր մեկնած փրկարարները մետաղյա կառուցվածքներն ապամոնտաժել եւ տեղափոխել են անվտանգ տարածք:

Թունավորում

Սեպտեմբերի 25-ին դեղորայքային թունավորումով «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Գյումրիի «Մսի կոմբինատ» թաղամասի հանրակացարանի բնակիչ, 1980 թ. ծնված Կամո Մարաքյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը ծանր է:

Հրդեհներ

Հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի բռնկման 59 դեպք, որոնցից 14-ը՝ խոտածածկ տարածքներում:

Խոտածածկույթ

Սեպտեմբերի 20-ին Աբովյանի Սարալանջ թաղամասում բռնկված հրդեհից այրվել է 30 ծառ, 8000 քմ մակերեսով խոտ, թփուտ եւ շինարարական իրերով լցված՝ 20 քմ մակերեսով մի տնակ:

Նույն օրը Շիրակի մարզի Ախուրիկ գյուղում՝ ՌԴ սահմանապահ զորքերի N ուղեկալի տարածքում այրվել է 15 հա հնձված արտ, իսկ Եղվարդի նախկին «Նավթաբազայի» տարածքում գործող կաթսայատանը՝ 4 պատուհան եւ 2 հա խոտ:

Սեպտեմբերի 21-ին Չարենցավանի քաղաքային հիվանդանոցին հարակից տարածքում այրվել է 2 հա խոտատարածք:

Սեպտեմբերի 22-ին Արագածոտնի մարզի Օրգով գյուղում այրվել է 6 հա չոր խոտատարածք:

Պահեստավորած խոտ, հետն էլ այլ բաներ

Սեպտեմբերի 18-ին Բերդի Բաղրամյան փողոցի 37 տան բակում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է կուտակած 300 հակ խոտը:

Սեպտեմբերի 19-ին Գավառի Պետրոսյան փողոցի 36 տան բակում այրվել է պահեստավորած 700 հակ, իսկ Տավուշի մարզի Սարիգյուղի բնակիչ Վ. Հայրապետյանին պատկանող անասնագոմի տանիքում՝ 200 հակ խոտը:

Սեպտեմբերի 20-ին Շիրակի մարզի Ծաղկուտ գյուղում այրվել է Ա. Ստեփանյանին պատկանող 30 տոննա անասնակերը:

Սեպտեմբերի 22-ին Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի բնակիչ Միոյանի տան բակում այրվել է պահեստավորած 200 հակ ծղոտը, իսկ Վարդենիսի Արզոյան փողոցում՝ Հակոբյանի ամբարած 2000 հակ անասնակերը:

Սեպտեմբերի 23-ին Մարտունու Մյասնիկյան փողոցին հարակից՝ Մ. Զոհրաբյանին պատկանող դաշտում այրվել է պահեստավորած 900 հակ խոտը, իսկ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղի բնակիչ Խ. Մխիթարյանին պատկանող հացատանը՝ 70 քմ մակերեսով տանիքը եւ պահեստավորած 100 հակ խոտը:

Սեպտեմբերի 24-ին Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով

➔

ՀԱՅԱՍՏԱՆԻ NEWS
.. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ..

Հրաձգություն ֆիննական քոլեջում

Սեպտեմբերի 23-ին Ֆինլանդիայի Կաուհայոքի քաղաքի քոլեջում 22-ամյա մի երիտասարդ կրակ է բացել ուսանողների ուղղությամբ: Սպանելով 11 եւ վիրավորելով 3 ուսանողի, հրաձիգը փորձել է ինքնասպան լինել: Մարդասպանին՝ գլխին ստացած հրազենային վնասվածքով տեղափոխել են հիվանդանոց, որտեղ էլ ժամեր անց նա, այդպես էլ գիտակցության չգալով, մահացել է:

Տարբեր տվյալներով՝ միջադեպի պահին քոլեջում գտնվում էր 150-200 մարդ: Ոստիկաններն անմիջապես շրջափակել են շենքը եւ սկսել մարդկանց տարահանումը: Ըստ ոստիկանների՝ հրաձգությունից հետո չարագործը փորձել էր նաեւ հրդեհել քոլեջի շենքը:

Որոշ ժամանակ անց հայտնի է դարձել, որ նախօրեին ոստիկանները ձերբակալել եւ հարցաքննել էին ապագա մարդասպանին: Հարցաքննության առիթ էր դարձել երիտասարդի՝ ինտերնետային կայքերից մեկում տեղադրած տեսահոլովակը, որտեղ նա կրակում է ատրճանակից: Երիտասարդի հետ զրուցելուց հետո, ոստիկաններն ազատ էին արձակել նրան:

Գիշերային ակումբում ողջակիզվել է 43 մարդ

Չինաստանի Շենչժեն քաղաքի գիշերային ակումբներից մեկում բռնկված հրդեհի զոհ է դարձել 43 մարդ: Ակումբի եւս 51 այցելու ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ:

Հրդեհի բռնկման պահին ակումբում մոտ հազար մարդ է եղել:

Դեպքի վայրում աշխատող հրշեջներն ասում են, որ հրդեհի բռնկման պատճառ կարող էր դառնալ ակումբում օգտագործված հրատեխնիկան:

Հրդեհի բռնկման իրական պատճառները ճշտվում են:

Իրար են բախվել երեք ավտոբուս

Կիրակի օրը Բոլիվիայի Լա Պաս եւ Օռուրո քաղաքները միացնող մայրուղու վրա իրար են բախվել երեք ավտոբուս: Բախման հետեւանքով զոհվել է առնվազն 15 մարդ, ավելի քան 50 ուղեւոր տարբեր վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ըստ նախնական վարկածի՝ մեծ արագությամբ ընթացող ավտոբուսներից մեկի վարորդը փորձել է վազանց կատարել, դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել ուղեւորներով լի երկու այլ ավտոբուսների:

Մարոկկոյի Տարուդանթ քաղաքի մերձակայքում շրջվել է 54 ուղեւորի տեղափոխող միջքաղաքային ավտոբուսը: Վթարի հետեւանքով զոհվել է 12 եւ վնասվածքներ ստացել 43 մարդ:

Ոստիկանության ներկայացուցիչների հաղորդած տվյալներով՝ վթարի պատճառ է դարձել վարորդի կողմից արագության գե-

ռազանցումը:

Թայֆունն ավերածություններ է գործել

Սեպտեմբերի 24-ին խաղաղօվկիանոսյան «Հագուպիթ» թայֆունը հասել է Չինաստանի ափեր՝ բերելով տեղատարափ անձ-

րեւներ եւ փոթորկային քամի:

Քամու ուժգնությունը հասել է 180 կմ/ժ-ի: Ցիկլոնի ազդեցության գոտում են հայտնվել Գուանդուն, Գուանսի շրջանները եւ Հայնան կղզին: Տարահանվել է մոտ 30 հազար մարդ, դադարեցվել են լաստանավային երթեւեկությունը եւ ծովային բեռնափոխադրումները, խախտվել է մի շարք քաղաքների օդանավակայանների աշխատանքը: Հոնկոնգում փակվել են դպրոցներն ու մանկապարտեզները, տասնյակ մարդիկ ստացել են տաբեր աստիճանի վնասվածքներ:

Ֆաիմա Թունիբաբյան

ամբողջությամբ այրվել են է. Ղալեչյանին պատկանող անասնապահական ֆերմայի՝ 400 քմ մակերեսով տանիքը եւ պահեստավորած 350 հակ անասնակերը:

Թափոն

Սեպտեմբերի 20-ին Երեւանի Արշակունյաց պողոտայի 25/1 հասցեում գտնվող ռետինատեխնիկական իրերի գործարանի պահեստում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է ռետինե թափոն՝ 150 քմ մակերեսով:

Ավտոտնակում

Սեպտեմբերի 22-ին հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Դարբնիկ գյուղի 3-րդ փողոցի 40 տանը:

Այրվել են Ն. Շահմուրադյանին պատկանող ավտոտնակի՝ 30 քմ մակերեսով տանիքը, «ԳԱԶ-24» մակնիշի 27 LS 925 պետհամարանիշով ավտոմեքենան, «Դնեպր» մակնիշի մոտոցիկլետը եւ 10 քմ մակերեսով հնամաշ տնտեսական իրերը:

Նաիրա Եղիազարյան

Ու՞մ ջրաղացին են ջուր լցնում «Երեւան-Զրում»

Սեպտեմբերի 24-ին Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության աշխատակիցները միայն հեռուստաթերից տեղեկացան, որ արտակարգ իրավիճակ է Երեւանի Աջափնյակ համայնքում: Բնականաբար, համայնքի Սիլիկյան եւ Լուկաշին թաղամասերի բնակիչներն էլ ուշ իմացած կլինեն, որ իրենց ծորակներից բխող խմելու ջուրը պիտանի չէ օգտագործման՝ գոնե խմելու նպատակով:

Նույն օրը, ժամը 16.29-ին կապ է հաստատվել «Երեւան-Զուր» ՓԲԸ դիսպետչեր Ս. Հովհաննիսյանի հետ, որը հաստատել է տեղեկությունը: Դիսպետչերը նաեւ հայտնել է, թե սեպտեմբերի 23-ին իրականացված ստուգման արդյունքներում պարզվել է, որ խմելու ջրի որակը չի համապատասխանում չափանիշներին: «Երեւան-Զուր» ՓԲԸ-ի լաբորատորիայի աշխատակիցները վերցել են ջրի փորձանմուշներ, արդյունքների մասին կհաղորդվի լրացուցիչ:

Հարց է մնում, թե կարո՞ղ է ավելի լուրջ արտակարգ իրավիճակ լինել, քան խմելու ջրի աղտոտումը: Մենք չէ, որ «Երեւան-Զրի» մասնագետներին պետք է ասենք, թե ինչ ծանր համաճարակային հետեւանքներ կարող է ունենալ հետը կեղտաջրեր բերող խմելու ջրի խողովակը: Իսկ նման դեպքերում ամենաարդյունավետը, ամենաարագ արձագանքումը օպերատիվ տեղեկատվություն տալն է ԲՈԼՈՐԻՆ:

Մեր մարտական ընկերը

Կյանքի 87-րդ տարում մահկանացուն կնքեց մեր մարտական ընկեր՝ պաշտոնաթող գնդապետ Նիկիտա Հարությունյանը:

Գնդապետ Ն. Հարությունյանը ծնվել է 1922 թ. Դոնի Ռոստով քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Դոնի Ռոստովի կոնսերվատորիա, սակայն նրան չի հաջողվել ավարտել կոնսերվատորիան եւ ստանալ բարձրագույն երաժշտական կրթություն: 1941 թ. հունիսի 22-ին սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը, եւ երիտասարդ ուսանող Նիկիտա Հարությունյանը զորակոչվում է Սովետական բանակ:

Զինվորական ուսումնարանն ավարտելուց հետո, ստանալով լեյտենանտի զինվորական կոչում, մեկնում է ռազմաճակատ եւ մինչեւ պատերազմի ավարտը մասնակցում պատերազմական գործողություններին: Պատերազմում ցուցաբերած արիության համար պարգեւատվում է Սովետական Միության պետական շքանշաններով եւ մեդալներով:

Հայրենական պատերազմի ավարտից հետո Ն. Հարությունյանը վերադառնում է Հայաստան եւ որպես փորձված, բարձր ռազմական գիտելիքներ ունեցող սպա, նշանակվում Երեւանի պետական գյուղատնտեսական ինստիտուտի ռազմական ամբիոնի պետ ու իր հարուստ ռազմական գիտելիքները եւ փորձը փոխանցում ուսանողներին:

1961 թվականին, երբ ստեղծվում է քաղաքացիական պաշտպանության համակարգը, գնդապետ Ն. Հարությունյանը Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի հրամանով նշանակվում է քաղաքացիական պաշտպանության դասընթացների պետ, իսկ 1962 թ. ԽՍՀՄ քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով նշանակվում Երեւանի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ: 1961 թ.-ից մինչեւ իր կյանքի վերջը գնդապետ Ն. Հարությունյանը ծառայել է նախ քաղաքացիական պաշտպանության, ապա արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում՝ իր բազմամյա փորձը եւ գիտելիքներն անմնացորդ փոխանցելով երիտասարդ սերնդին:

Գնդապետ Ն. Հարությունյանը հրաշալի ընկեր էր, ընտանիքի սիրված հայր: Նրա վառ կերպարը մշտապես կպահպանվի իր ընկերների սրտերում:

Մի խումբ ընկերներ

Ցավակցություն

ՀՀ ԱԻՆ ՀՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության անձնակազմը խոր վշտով ցավակցում է դիսպետչեր, փ/ծ սերժանտ Մանուկ Մխիթարյանին եւ իր հարազատներին՝ մոր՝ Շողիկ Մարտիրոսյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

..ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..

Սեպտեմբերի 18-24-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են երկու թույլ երկրաշարժ: Սեպտեմբերի 21-ին Բավրա քաղաքից 4 կմ հարավ-արեւմուտք գրանցվել է 3 բալանոց սեյսմիկ ցնցում: Հաջորդ օրը նույն ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Հայաստան-Թուրքիա սահմանային գոտում՝ Գյումրիից 29 կմ հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցվել:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել սեպտեմբերի 24-ին Մեքսիկայի խաղաղօվկիանոսյան ափամերձ հատվածում, Հալիսկո նահանգից հարավ-արեւմուտք, եւ ունեցել է 6,4 մագնիտուդ: Երկրաշարժի հետեւանքով տուժածներ եւ ավերածություններ չկան: Ստորգետնյա ցնցումները զգացվել են նաեւ ԱՄՆ-ում:

ՍՊԱԾ գործակալություն

..1-03.. ԵՐԵՒԱՆ

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2904 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 380 մարդ: Եղել է մանկական 232 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 46 երեխա:

Գրանցվել են 33 մահ եւ 25 դժբախտ պատահար:

Սեպտեմբերի 18

Պռոշյան սովխոզում վթարի է ենթարկվել եւ գանգուղեղի վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն տեղափոխվել 46-ամյա Ս. Բաղդասարյանը:

Ներքին Չարբախի 1 փողոցի 10 տանը բարձրությունից ընկել եւ ուղեղի ցնցումով «էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 14-ամյա Վ. Մանուկյանը:

Սեպտեմբերի 19

Կիեւյան կամրջից իրեն նետել եւ մահացել է մոտ 60 տարեկան մի կին:

Արշակունյաց պողոտայում տեղի ունեցած վթարի հետեւանքով տուժել է եւ կրծքավանդակի սալջարդով «էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվել քառասունամյա Ֆ. Սարիբեկյանը:

Սեպտեմբերի 20

Դավթաշենի 4-րդ թաղամասում տեղի ունեցած վթարի հետեւանքով տուժել են եւ վնասվածքներով «Սբ. Աստվածամայր» բժշկական կենտրոն տեղափոխվել 5-ամյա Ա. Վարդանյանը եւ 30-ամյա Ա. Ազատյանը:

Մանկական երկաթուղում բարձրությունից ընկել եւ գլխուղեղի վնասվածքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 21-ամյա Ն. Հայրապետյանը:

Նորագավթում վթարի ենթարկված 47-ամյա Ս. Նալինյանն աջ ազդրի կոտրվածքով տեղափոխվել է «Շենգավիթ» բժշկական կենտրոն:

Սեպտեմբերի 21

Սունդուկյան փողոցում վրաերթի ենթարկվել եւ բազմաթիվ վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 40 տարեկան Անահիտը:

Բաբաջանյան 5/11 հասցեում բարձրությունից ընկած 18-ամյա Ն. Խաչիկյանը գանգուղեղի վնասվածքով տեղափոխվել է «Մալաթիա» բժշկական կենտրոն:

Սեպտեմբերի 22

Քանաքեռի 7 փողոցում էլեկտրահարվել եւ գլխուղեղի ցնցումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 28-ամյա Ի. Դողոյանը:

Ռոստոմի 71 հասցեից երակների կտրվածքով՝ ձախ դաստակի կտրված վերքով թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 71-ամյա Ա. Բաբաջանյանը:

Սեպտեմբերի 23

Կոմիտասի պողոտայի եւ Նաիրի Զարյան փողոցի խաչմերուկում վթարի է ենթարկվել եւ բազմաթիվ վնասվածքներով կենտրոնական հոսպիտալ տեղափոխվել 26-ամյա Ե. Գուդաշեւան:

Դեղորայքային թունավորումով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա Ի. Մելքոնյանը:

Նոր Նորքի 2-րդ զանգվածի 16 հասցեում երակների կտրվածքից մահացել է 22-ամյա Գ. Քյուրեյանը:

Արշակունյաց պողոտայում տեղի ունեցած վթարից մահացել է 50 տարեկան մի տղամարդ:

Սեպտեմբերի 24

Դոդոյան 30 հասցեում հրազենային վնասվածքից մահացել է 54-ամյա Հ. Գեւորգյանը:

Հիդրոմետ ծառայություն
..Եղանակի տեսություն..

Սեպտեմբերի 18-ին, 23-24-ը առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ՝ 1-4 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Սյունիքի հովիտներում եւ Արարատյան դաշտում՝ +28...+33, Տավուշում եւ Արցախում՝ +23..+28, Լոռիում, Սյունիքի նախալեռներում եւ լեռնային շրջաններում՝ +21...+26 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է. լեռնային շրջաններում՝ +3...+8 (Աշոցքում՝ 1), Լոռիում՝ +5..+10, Տավուշում՝ +7..+12, Սյունիքի նախալեռներում՝ +9...+13, Արարատյան դաշտում՝ +10...+15, Արցախում եւ Սյունիքի հովիտներում՝ +14...+19 ºC:

Սեպտեմբերի 26-ին, 30-ին տեղ-տեղ, 27-29-ն ամենուրեք սպասվում են անձրեւ եւ ամպրոպ, 27-28-ը տեղ-տեղ՝ զգալի, լեռնանցքներում սպասվում է մառախուղ: Քամին արեւմտյան՝ 5-10 մ/վրկ, 27-29-ը՝ տեղ-տեղ ուժգնացում 18-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 27-ի ցերեկը կնվազի 6-8 աստիճանով:

Պետրոսյանցի, Յովանովիչի եւ խաղաղասեր ատոմի մասին

ë ÏÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ



Երկու տարի անց, նույն օգոստոսին՝ ԽՍՀՄ նախարարների խորհուրդը հաստատեց ՀԱԷԿ-ի առաջին հերթափոխի նախագիծը՝ ВВЭР-440 տիպի երկու էներգաբլոկով: Գլխավոր նախագծող նշանակվեց «Ատոմջերմաէլեկտրանախագիծ» ինստիտուտի Գորկու բաժանմունքը: Նախագծողների համար ամենալուրջ բարդությունը կապված էր ՀԱԷԿ-ի տեղակայման տարածքի սեյսմաակտիվության հետ, այն դեպքում, երբ լիովին բացակայում էր նորմատիվային բազան:

Հայկական ատոմակայանի առաջին էներգաբլոկը շահագործման է հանձնվել 1976 թ. հունվարին, երկրորդը՝ 1980-ին:

Մեր ատոմակայանը նաեւ այն հազվագյուտներից է, որ բացվել-փակվելու հակումներ ունի: 1989 թվականին այն փակվել է, սակայն էներգետիկ ճգնաժամի պատճառով 1995-ին երկրորդ էներգաբլոկը վերագործարկվել է: Ներկայումս գործող միակ՝ երկրորդ բլոկն ապահովում է Հայաստանի էլեկտրաէներգիայի 40 տոկոսը:

Հայկական ատոմակայանը շուրջ 3000 աշխատակից ունի... **անտոն** աշխատակից:

Հեռատեսության խորհուրդը

ՀԱԷԿ-ում տեղակայված է սեյսմիկ վտանգավոր գոտիներում կառուցվող ատոմակայանների համար նախատեսված ջրաջրային երկու էներգառեակտոր՝ (ВВЭР-440 водоводяной энергореактор): Սա հավելյալ առիթ է անդրադառնալու մեր հայրենակից, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, նախկին Խորհրդային Միության Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Պետրոսյանցին ու նրա՝ հայ ժողովրդին մատուցած ծառայությանը: Հենց նա է կարողացել հիմնավորել եւ Խորհրդային Միության էներգետիկ եւ քաղաքական վերնախավին ապացուցել ու համոզել, որ ՀԱԷԿ-ում անհրաժեշտ է տեղադրել բացառապես ВВЭР-440 տիպի ռեակտոր, նրանց կողմից առաջարկված РБМК (реактор большой мощности канальний) տիպի ռեակտորի փոխարեն: Բանն այն է, որ Մոսկվային, ամենայն հավանականությամբ, առավելապես հետաքրքրում էր ոչ այնքան ատոմակայանի անվտանգությունը, որքան հզորությունը: РБМК տիպի ռեակտորը էներգետիկների լեզվով կոչվում է «միլիոննիկ»՝ նրա հզորությունը ժամում մեկ միլիոն կիլովատտ է, որը թեպետ երկուս ու կես անգամ հզոր էր ВВЭР-440 ռեակտորից, այնուամենայնիվ, անվտանգության ապահովման տեսանկյունից մի քանի անգամ զիջում էր վերջինիս: РБМК ռեակտորներով ատոմակայանները (ինչպիսին էր Չեռնոբիլի ԱԷԿ-ը) միակոնտուրային են, իսկ ВВЭР-440-ը՝ երկկոնտուրային է, որտեղ առաջին կոնտուրի ռադիոակտիվ ջրերը չեն շփվում երկրորդ կոնտուրի ջրերի հետ եւ, փաստորեն, ռեակտորային արտադրամասին հարակից մալուխային թունելներում, կիսահարկերում եւ տուրբինային արտադրամասում ռադիոակտիվ ֆոնն իսպառ բացակայում է:

Չլինեին Պետրոսյանցի հեռատեսությունն ու համառությունը, ի՞նչ իմանաս, թե ի՞նչ կարող էր տեղի ունենալ մեզ մոտ...

Անուղում

Անդրանիկ Պետրոսյանցը ծնվել է 1906 թվականին, Տերսկի շրջանի (այժմ՝ Հյուսիսային Օսիա) Վլադիկավկազ քաղաքում: 1922-23 թթ. աշխատել է Վրաստանում, որպես Հայաստանի տնտեսական ներկայացուցչության առաքիչ: 1929 թվականից սովորել է Մոսկվայի արտադրական-տնտեսագիտական ինստիտուտի կուրսերում, ապա՝ Ուրալյան մեխանիկամեքենաշինական ինստիտուտում: 1939 թվականից աշխատել է ԽՍՀՄ ծանր մեքենաշինության ժողկոմատում՝ հասնելով ժողկոմի տեղակալի պաշտոնին: 1941-ին նա արդեն ԽՍՀՄ հաստոցաշինության ժողկոմի առաջին տեղակալն էր: Պատերազմի տարիներին տանկաշինության ասպարեզի ղեկավարներից է եղել: 1945-47 թթ. աշխատել է որպես ԽՍՀՄ նախարարների խորհրդի (այն ժամանակ՝ դեռ ժողկոմատ) նախագահի տեղակալի օգնական, ապա, մինչեւ 1953 թ.՝ արդեն նախարարների խորհրդին կից 1-ին գլխավոր վարչության պետի տեղակալ: 1953-ից անցնել է աշխատանքի ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարությունում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, դարձել փոխնախարար:

1962 թ. փետրվարից մինչեւ 1965 թ. Պետրոսյանցն ատոմային էներգիայի օգտագործման գծով ԽՍՀՄ նախարարների խորհրդի պետկոմի նախագահն էր:

1965-87 թթ. աշխատել է ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարությունում՝ ատոմային էներգիայի օգտագործման գծով գլխավոր վարչության պետ, ապա 1967-ից՝ նախարարի առաջին տեղակալ:

1987-ից անցել է կենսաթոշակի:

Սոցիալիստական աշխատանքի հերոս է, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր:

Նոր հեռանկարներ

«Հայաստանի նոր ատոմակայանի կառուցումը կարող է արժենալ 5,5 միլիարդից 7 միլիարդ դոլար»,- նախօրեին՝ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության եւ ԱՄՆ կառավարության կողմից կազմակերպված համաժողովի ժամանակ հայտարարեց Հայաստանի էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը: Ավելի վաղ նախարարը նշել էր, որ նոր ատոմակայանի կառուցումը կարող է արժենալ 4 միլիարդ դոլար: Արմեն Մովսիսյանի պարզաբանմամբ՝ նախապես հայտարարված 2 միլարդ դոլարի կրկնապատկումը պայմանավորված է միջազգային շուկայում էներգետիկ սարքավորումների եւ մետաղածուլվածքների գների բարձրացմամբ:

2016-ին գործունեությունը դադարեցնող Մեծամորի ատոմակայանի փոխարեն, Հայաստանը մտադիր է 1000-ից 1200 մեգավատտ հզորությամբ նոր ատոմային էներգաբլոկ կառուցել: Գումարի տնտեսման նպատակով նախատեսվում է էներգաբլոկը գործարկել հին, այսինքն՝ ներկայիս ատոմակայանի տարածքում:

«Հին ատոմակայանը գործելու է այնքան ժամանակ, քանի դեռ չի շահագործվել նորը», - հայտարարել է նախարարը, ընդգծելով, որ ՄԱԳԱՏԷ-ն դրական է գնահատում զարգացման նման հեռանկարը: Սեպտեմբերի 24-ին կայացած համաժողովի ընթացքում ներկայացվեցին վերջերս ավարտված նոր ատոմային բլոկի պլանավորման ուսումնասիրությունները: ԱՄՆ Կառավարության կողմից ֆինանսավորվող եւ Միացյալ Նահանգների մասնագետների կողմից պատրաստված տեխնիկատնտեսական փաթեթը՝ նոր էներգաբլոկի կառուցման համար առաջնային փուլի վերլուծությունն են տրամադրում: «Ուսումնասիրության արդյունքները կօգնեն ՀՀ Կառավարությանը որոշումներ կայացնել՝ հիմնվելով նոր կայանի տեխնիկական տարբերակների եւ լուծումների վրա, ինչպես նաեւ հիմք կծառայեն հավանական մատակարարների եւ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ բանակցություններ սկսելու համար», - ասել են ամերիկյան կողմի ներկայացուցիչները: Համաժողովի բացման խոսքում Հայաստանում ԱՄՆ նորանշանակ դեսպան Մարի Յովանովիչը հայտարարել է. «Այս ուսումնասիրությունները հնարավորություն կտան նոր ատոմակայանի կառուցման ուղու սահմանման համար, որը կապահովի Հայաստանի ժողովրդի անվտանգությունը, ինչպես նաեւ Հայաստանի էներգետիկ կարիքները բազմաթիվ տարիների ընթացքում»:

Հավելենք նաեւ, որ օրերս՝ անդրադառնալով նոր էներգաբլոկի կառուցման խնդրին, Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փենինգտոնը նշել էր, թե ԱՄՆ-ն ակնկալում է հայկական ատոմակայանի հզորությունների փոխարինման այլընտրանքային լուծումներ:

Հիշեցման կարգով նշենք նաեւ, որ խնդրի լուծման եւ արտասահմանյան ներդրումների ներգրավման նպատակով Հայաստանի խորհրդարանը 2006 թվականին վերացրեց ատոմային էներգետիկայի պետական մենաշնորհը:

Շնորհավորանք

Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատի անձնակազմը ցանկացել է մեր թերթի միջոցով շնորհավորել իր հրամանատարին՝ փ/ծ մայոր Սերոբ Գաբրիելյանին, ծննդյան օրվա կապակցությամբ: Խմբագրություն ուղարկած նամակում նրանք, օգտվելով ընձեռված հնարավորությունից, ներկայացրել են նաեւ հրամանատարի կենսագրական տվյալները. Ս. Գաբրիելյանը ծնվել է Սպիտակ քաղաքում, բանվորի ընտանիքում, 1968 թ. սեպտեմբերի 22-ին: Ավարտել է Սպիտակի թիվ 4 միջնակարգ դպրոցը, Վանաձորի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1994 թ. ծառայել է Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատում, սկզբում, որպես հրդեհային անվտանգության տեսուչ, ապա՝ պետի տեղակալ, հրամանատար՝ 2005-ից: Այնուհետեւ տողաները գրում են.

«Սերոբ Գաբրիելյանը նախեւառաջ իսկական մարտիկ է ու նոր միայն՝ հրամանատար: Դրա շնորհիվ է, որ նա քաջատեղյակ է ջոկատի անդամներից յուրաքանչյուրի թե անձնական, թե ծառայողական հոգսերին: Եւ ամեն ինչ անում է այդ հոգսերը թեթեւացնելու համար: Մինչեւ այս տարվա ձմեռը մեր ջոկատի ծառայությունն ընթանում էր վագոն-տնակային պայմաններում, ինչն ավելորդ դժվարություններ էր առաջացնում: Այդ նրա ջանադրության ու անբասիր ծառայության շնորհիվ է, որ այսօր մենք ունենք շենքային պայմաններ՝ զորանոցով, կաբինետներով, խոհանոցով: Ջոկատում առողջ մթնոլորտ է տիրում:

Մեր հրամանատարը գրագետ է, կազմակերպված ու նույնը պահանջում է անձնակազմից: Իսկական ընկեր է, պատրաստ օգնության ձեռք մեկնելու ամեն պահի:

Օրինակելի ամուսին ու հայր է: Ունի մեկ որդի եւ մեկ դուստր:

Շնորհավորում ենք մեր հրամանատարին ծննդյան տոնի առթիվ, ցանկանում անփորձանք ծառայություն, առողջություն, արեւշատություն»:

«Արտակարգ թերթը», տպագրելով նամակը եւ միանալով շնորհավորանքին, հույս ունի, որ այսպես նաեւ ընթերցողներն ավելի լավ կճանաչեն մեր անվտանգության պահպանման գործին լծված մարտիկներին:

Կառավարում շվեդական ձեւով

Դասընթացի մասնակիցները

Ամեն ինչ սկսվեց 1988 թվականի դեկտեմբերին: Հայաստանում տեղի ունեցավ հզոր երկրաշարժ, եւ երկրի իշխանություններն օգնության խնդրանքով դիմեցին համայն աշխարհին:

Վարժանք՝«ժեստերի եւ հաղորդակցության լեզուն»

Շվեդիան հայտնեց օգնության հասնելու իր պատրաստակամությունը, եւ կառավարությունը հանձնարարեց Շվեդիայի փրկարար ծառայությունների գործակալությանը (SRSA) առաջին անգամ ձեռնամուխ լինել միջազգային գործունեության:

Տարիներ անցան, եւ միջազգային փրկարարական գործին ներգրավումը դարձավ շվեդական գործակալության կարեւոր առաքելությունը:

Այսօր գործակալությունն իր հաշվին գրանցել է մասնակցություն միջազգային մակարդակի 108 լայնածավալ առաքելության՝ օգնության ձեռք մեկնելով աշխարհի տարբեր ծայրերում ապրող բնակչությանը: Գործակալությունը տեխնիկապես եւ մասնագետների հագեցվածությամբ լիովին պատրաստ է գործուն աջակցություն ցուցաբերել ցանկացած արտակարգ իրավիճակի՝ երկրաշարժ, անտառային հրդեհ, ջրհեղեղ, ականապատում, փոթորիկ, փլուզում (տարածքների, ճանապարհների, կամուրջների) սողանք, համաճարակ՝ իրականացնելով որոնողափրկարարական, պարենամթերքի մատակարարման, վերականգնողական, ականազերծման, փախստականների տեղափոխման, տեղավորման եւ այլ աշխատանքներ:

Շվեդիայի փրկարար ծառայությունների գործակալությունից աշխարհի տարբեր երկրներ մշտապես գործուղվում են փորձագետներ՝ խորհրդատվական, հոգեբանական աջակցություն տրամադրելու առաքելությամբ, ինչպես նաեւ հետազոտող-մասնագետներ՝ այլ երկրների փորձն ուսումնասիրելու նպատակով:

Գործակալությունն ամեն տարի վարում է դասընթացներ, որոնց մասնակցում են ինչպես Շվեդիայի, այնպես էլ տարբեր երկրների կառավարական եւ ոչ կառավարական կառույցների՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դասընթացները հաճախ անցկացվում են նաեւ այլ երկրներում:

Գործակալության կազմակերպած հերթական դասընթացն անցկացավ 2008 թ. սեպտեմբերի 9-16-ը, Շվեդիայի Սանդյո քաղաքի՝ Շվեդիայի փրկարարական ծառայությունների գործակալության քոլեջում: Գողտրիկ եւ խաղաղ Սանդյոյում տեղակայված այս հաստատությունը Շվեդիայի փրկարարական ծառայությունների գործակալության չորս քոլեջներից մեկն է:

«Տեղեկատվության կառավարումն արտակարգ իրավիճակներում» թեմայով դասընթացը կազմակերպել էր գործակալությունը՝ Եվրոատլանտյան գործընկերության խորհրդի աջակցությամբ, ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում:

Դասընթացի նպատակն էր՝ զարգացնել մասնակիցների՝ արտակարգ իրավիճակներում օպերատիվ տեղեկատվության կառավարման ունակությունները, առաջարկել մեթոդներ եւ ռազմավարություններ՝ նման իրավիճակներում ներքին եւ արտաքին տեղակատվության արդյունավետ կառավարման համար, սովորեցնել հանրային իրազեկման եւ ԶԼՄ-ներին տրամադրվող տեղեկատվության կառավարման հմտություններ:

Խմբային աշխատանք

Սեմինարի աշխարհագրությունը բավական ընդարձակ էր. մասնակցում էր արտակարգ իրավիճակներում տեղեկատվության հարցերով զբաղվող 24 մասնագետ տարբեր երկրներից՝ Հայաստանից, Ռուսաստանից, Գերմանիայից, Մակեդոնիայից, Աֆղանստանից, Ղրղզստանից, Մոլդովայից, Լատվիայից, Լիտվայից, Էստոնիայից, Ուկրաինայից, Բելոռուսից:

Դասընթացին Հայաստանը ներկայացնում էին ՀՀ ԱԻՆ ՀՓԾ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետը եւ ՀՀ ԱԻՆ նախարարի մամուլի քարտուղարը:

Միջազգային տարբեր կառույցներից եւ կազմակերպություններից հրավիրված մի շարք փորձագետներ զեկուցումներ կարդացին՝ «Տեղեկատվության կառավարումը», «Օպերատիվ ռազմավարություններ. հասարակության իրազեկումը, ԶԼՄ-ների հետ կապը», «Մարդասիրական տեղեկատվության կառավարումը», «Օպերատիվ տեղեկատվության կառավարումը գրասենյակային ծառայողական գործունեության ոլորտում», «ԶԼՄ-ների դերը արտակարգ իրավիճակներում», «Արտակարգ իրավիճակների լուսաբանումը հեռուստատեսությամբ. ԶԼՄ-ների ղեկավարման սկզբունքները», «Տեղեկատվության հետ աշխատողի դերը», «Օգնության տրամադրում ճգնաժամային իրավիճակում», «Մշակութային բազմազանություններ եւ տեղեկատվության կառավարում» թեմաներով: Զեկուցումներն ուղեկցվում էին մասնակիցների եւ փորձագետների հարց ու պատասխաններով, աշխույժ քննարկումներով եւ այնքան սպասված սուրճի ընդմիջումներով:

Սանդսվալի հրշեջ-փրկարարական կայանը

Դասընթացը կենտրոնացած էր արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության կառավարման ողջ ընթացքի՝ հավաքման, ճշգրտման, վերլուծության եւ պատրաստման, տարածման եւ պահպանման գործընթացների, ինչպես նաեւ հանրային իրազեկման եւ ԶԼՄ-ների դերի կարեւորության վրա: Մյուս կարեւոր խնդիրն առնչվում էր ճգնաժամերի կանխարգելմանը եւ մշակութային բազմազանություններին:

Բացի զեկուցում-դասախոսություններից՝ սեմինարն ընդգրկում էր նաեւ գործնական վարժանքներ՝ «ժեստերի եւ հաղորդակցության լեզուն», «Հեռուստահարցազրույցներ» թեմաներով եւ խմբային աշխատանքներ:

Հետաքրքիր ծրագիր էր մշակված մասնակիցների համար. կազմակերպիչները նախատեսել էին այցելություն Սանդսվալ քաղաքում տեղակայված հրշեջ-փրկարարական կայան:

Սանդսվալի կայանը, որը գործում է 1889 թվականից, գտնվում է քաղաքապետարանի ենթակայության ներքո: Տեխնիկապես լավ հագեցած է՝ նախատեսված բազմապրոֆիլ փրկարարական աշխատանքների համար:

Մասնակիցներին ներկայացվեցին կայանի տեխնիկական հնարավորությունները, ահազանգերի ստացման եւ դրանց օպերատիվ արձագանքման մեխանիզմները:

Այցի վերջում կայանի աշխատակիցները դասընթացի մասնակիցներին հանձնեցին փոքրիկ նվերներ, իհարկե՝ մասնագիտական բնույթի:

Կայանի տեխնիկական հագեցվածությունը

Սանդյոյի քոլեջում ստեղծված էին բոլոր պայմանները՝ դասընթացից դուրս ազատ ժամանակը լավ կազմակերպելու համար: Քոլեջը գտնվում էր անտառային տարածքում, գետի ափին: Մասնակիցները կարող էին ձուկ բռնել, համարձակները՝ նույնիսկ լողալ: Տարբեր սպորտաձեւերի համար նախատեսված մարզադահլիճները եւս մասնակիցների տրամադրության տակ էին:

Հանգստյան օրերը մասնակիցներն անցկացրեցին Սանդսվալ քաղաքում, սարի վրա տեղակայված հյուրանոցային համալիրում՝ հագեցած ժամանցային ծրագրով:

Դասընթացը կազմակերպված էր բարձր մակարդակով, ինչը տրամադրում էր բոլոր մասնակիցներին ցուցաբերել մեծ ակտիվություն՝ խմբային աշխատանքներում, գործնական պարապմունքներում, տարբեր քննարկումների եւ, ընդհանրապես, ողջ դասընթացի ժամանակ:

Թրթուրավոր տեխնիկա դժվարանցանելի տեղանքի համար

Գործուղումը շատ օգտակար էր մասնագիտական ունակությունների եւ, հատկապես, տարբեր երկրների գործընկերների հետ համագործակցության կապերի ձեռքբերման եւ ամրապնդման առումով:

Կարեւոր էր հատկապես տարբեր երկրներից ժամանած փորձագետների եւ իրար՝ դասընթացի մասնակիցների միջեւ փորձի փոխանակումը:

Ռուզաննա Հակոբյան
ՀՓԾ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը

Սպանված է Ջոն Քենեդիի մարդասպանը

1963 թ. նոյեմբերի 22-ին Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում հազարավոր մարդկանց աչքի առաջ երեք կրակոցով սպանում են ԱՄՆ-ի նախագահ Ջոն Քենեդիին: Երկու օր անց՝ նոյեմբերի 24-ին, երբ ոստիկանությունը նախագահի սպանության մեջ մեղադրվող միակ կասկածյալ Լի Հարվի Օսվալդին տեղափոխում էր մեկ այլ բանտ, նրան սպանում է գիշերային ակումբի սեփականատեր Ջեք Ռուբին:

Պատմում է լուսանկարի հեղինակ Ռոբերտ Ջեքսոնը. «Օսվալդին դուրս են հանում: Ես ձեռքումս սեղմում եմ լուսանկարչական ապարատը: Ոստիկանները հազիվ են զսպում հավաքված մարդկանց ճնշումը: Օսվալդը մի քանի քայլ է անում: Ես սեղմում եմ տեսախցիկի կոճակը: Երբ հնչեց կրակոցի ձայնը, ես կրկին սեղմեցի կոճակը, սակայն ապարատի լուսարձակը չէր հասցրել վերալիցքավորվել: Ես անհանգստացա առաջին լուսանկարի համար: Մտածում էի՝ արդյոք այն հաջո՞ղ է ստացվել: Երկու ժամ անց, երբ նկարը երեւակեցի, տեսա, որ ամեն ինչ կարգին է»:



Ճակատագրի բավիղներում

Յուրաքանչյուր մարդու կյանքում կարող են տեղի ունենալ այնպիսի հետաքրքիր ու առեղծվածային զուգադիպություններ, որոնք կամա թե ակամա մի փոքր ավելի երկար մտածելու տեղիք են տալիս: Այդ ժամանակ սկսում է թվալ, թե պատահականություններ չկան եւ ամեն ինչ կանխորոշված է ի վերուստ...

Նաոոլեոն Բոնաոարs եւ Ադոլֆ Հիտլեր

Նապոլեոնը ծնվել է 1760 թվականին, իսկ Հիտլերը՝ 1889-ին: Տարբերությունը 129 տարի է:

Նապոլեոնն իշխանության է եկել 1804 թվականին, Հիտլերը՝ 1933-ին: Տարբերությունը կրկին 129 տարի է: Երկուսն էլ այդ ժամանակ 44 տարեկան են եղել:

Նապոլեոնը Վիենա է մտել 1812-ին, Ադոլֆ Հիտլերը՝ 1941 թվականին՝ 129 տարի անց:

Նապոլեոնը պատերազմում պարտվում է 1816 թվականին, Հիտլերը՝ 1945-ին: Տարբերությունը կրկին նույնն է:

Երկուսն էլ 52 տարեկանում հարձակվել են Ռուսաստանի վրա, իսկ պատերազմում պարտություն կրել 56 տարեկանում:

Աբրահամ Լինքոլն եւ Ջոն Քենեդի

Ականավոր ու հայտնի այս երկու մարդկանց ճակատագրերի նմանության մասին շատ է ասվել: Սակայն հիմա եկեք խոսենք թվերի ու փաստերի լեզվով:

Աբրահամ Լինքոլնը ծնվել է 1818 թվականին, Ջոն Քենեդին՝ 1918-ին: Տարբերությունը 100 տարի է:

Լինքոլնը Միացյալ Նահանգների նախագահ է դարձել 1860 թվականին, Քենեդին՝ 1960-ին՝ 100 տարի անց:

Երկուսին էլ սպանել են ուրբաթ օրը, իրենց կանանց ներկայությամբ՝ կրակելով նախագահների գլուխներին:

Լինքոլնին սպանել են «Քենեդի» թատրոնում, Քենեդիին՝ «Լինքոլն» մակնիշի ավտոմեքենայի մեջ:

Մահից ոչ շատ առաջ Լինքոլնն այցելում է Մերիլենդում գտնվող Մոնրո քաղաք, իսկ Քենեդին կարճ սիրավեպ է ունենում հանրահայտ երգչուհի եւ դերասանուհի Մերիլին Մոնրոյի հետ:

Լինքոլնի անձնական քարտուղարի ազգանունը Քենեդի էր, իսկ նախագահ Քենեդիի քարտուղարինը՝ Լինքոլն:

Ե՛վ Լինքոլնը, ե՛ւ Քենեդին ծագումով հարավից էին, երկուսն էլ՝ դեմոկրատական կուսակցությունից:

Նախքան Միացյալ Նահանգների նախագահ ընտրվելը, երկուսն էլ սենատոր են եղել:



Լինքոլնին սպանող Ջոն Ուիլքիս Բութը ծնվել է 1839 թվականին, իսկ Քենեդիին սպանող Լի Հարվի Օսվալդը՝ 1939-ին: Տարբերությունը կրկին 100 տարի է: Անգլերեն գրելիս (John Wilkes Booth եւ Lee Harvey Oswald) նրանց երկուսի անունները բաղկացած են 15-ական տառից: Սպանությունից հետո Բութը փորձում է թատրոնից փախչել, սակայն ոստիկանները նրան ձեղնահարկում բռնում են: Օսվալդը փախչում է ձեղնահարկից, եւ նրան ձերբակալում են թատրոնում:

Մահվանից հետո, թե՛ Լինքոլնի, թե՛ Քենեդու հետնորդի անունը Ջոնսոն էր: Աբրահամ Լինքոլնին փոխարինող էնդրյու Ջոնսոնը ծնվել էր 1808 թվականին, իսկ Ջոն Քենեդիին հաջորդած Լինդոն Ջոնսոնը՝ 1908 թվականին: Նրանց ծննդյան տարեթվերի տարբերությունն ուղիղ մեկ դար է:

Տասը տարի անց

Ինչպես տեսնում եք՝ հաճախ պատմությունը կարող է պարուրաձեւ ընթանալ ու ժամանակ առ ժամանակ կրկնվել: Հաշվի առնելով, որ Նապոլեոնի եւ Հիտլերի ծննդյան թվերի տարբերությունը 129 տարի է, իսկ Լինքոլնինն ու Քենեդիինը՝ 100, ապա կարելի է գուշակել, թե երբ են ծնվելու հաջորդ նմանօրինակ մեծության մարդիկ: Հետեւելով վերը նշված յուրօրինակ թվաբանությանը կարող ենք հաշվել, որ 2018 թվականին կարող է ծնվել եւս մեկ Նապոլեոն կամ եւս մեկ Հիտլեր կամ էլ՝ Լինքոլն-Քենեդի (1889+129=2018, 1918+100=2018): Նույն տրամաբանությամբ կարելի է որոշել նաեւ մյուս իրադարձությունների ժամանակը՝ 2060 թվականին իշխանության կգա ապագա Քենեդին, եւս 2 տարի անց՝ հաջորդ Նապոլեոնը ու այդպես շարունակ:

Ճիշտ է՝ ոմանք կարող են ասել, որ սա դեռ ոչինչ չի նշանակում, սակայն ով գիտե...

Առակներ

Երեք խորհուրդ (սուֆիստական առակ)

Մարդը մի անգամ թռչնակ բռնեց:

- Անազատության մեջ ես քեզ պետք չեմ գա, - ասաց թռչնակը, - բաց թող ինձ, եւ ես քեզ երեք արժեքավոր խորհուրդ կտամ:

Առաջին խորհուրդը թռչնակը խոստացավ տալ հենց ձեռքի մեջ, երկրորդը՝ ծառի ճյուղին նստած, եւ երրորդը՝ բլրի գագաթին:

Մարդը համաձայնեց ու հարցրեց, թե ո՞րն է առաջին խորհուրդը:

- Եթե դու զրկվել ես ինչ-որ բանից, անգամ կյանքիդ չափ թանկագին, մի ափսոսա:

Մարդը բաց թողեց թռչնին, որը թռավ նստեց ծառի ճյուղին ու տվեց իր երկրորդ խորհուրդը.

- Երբեք մի հավատա այն բանին, ինչը հակասում է առողջ դատողությանը եւ ապացույցներ չունի:

Հետո նա թռավ-հասավ բլրի գագաթին ու այնտեղից գոչեց.

- Ով թշվառական: Ես երկու հսկայական ադամանդ եմ կուլ տվել: Եթե դու ինձ սպանեիր, դրանք քոնը կլինեին:

Գոնե ինձ քո երրորդ խորհուրդը տուր, - ուշքի գալով՝ ասաց նա:

- Ի՞նչ հիմարն ես, - բացականչեց թռչնակը, - դու ինձնից երրորդ խորհուրդն ես ուզում, նույնիսկ չմտածելով առաջինի եւ երկրորդի մասին: Ես քեզ ասացի, որ չափսոսաս կորցրածիդ համար ու չհավատաս անհեթեթությունների, իսկ դու քիչ առաջ հակառակն արեցիր: Դու հավատացիր անմտությանն ու ափսոսացիր կորցրածիդ համար: Ինքդ մտածիր, ինչպե՞ս կարող է իմ մեջ, որ այսքան փոքրիկ եմ, երկու հսկայական ադամանդ տեղավորվել: Դու հիմար ես, այդ պատճառով էլ պետք է մնաս սովորական մարդկանց շարքերում:

Վայրի ելակը (բուդդիստական առակ)

Մարդն անցնում էր դաշտի միջով, որտեղ վագր էր քնած: Վագրին տեսնելով՝ մարդն ինչքան ուժ ուներ՝ փախավ: Վագրը՝ նրա հետեւից: Ձառիթափին հասնելով՝ մարդն սկսեց մագլցել լանջով, կառչեց վայրի վազի արմատից ու կախվեց նրանից: Վագրը վերեւից փնչացնում էր: Մարդը դողալով նայեց ներքեւ: Այնտեղ մի ուրիշ վագր կար...Միայն վազի արմատն էր պահում թշվառին: Երկու մկնիկ, մեկը սպիտակ, մյուսը՝ սեւ, դուրս սողացին իրենց բնից ու կամացուկ սկսեցին կրծել արմատը: Բոլոր կողմերից վտանգներով շրջապատված մարդն սկսեց նայել շուրջն ու ոչ հեռու՝ վայրի ելակի թուփ տեսավ, որի վրա մեն մի հատիկ հասած պտուղ կար: Մի ձեռքով արմատից բռնած մնալով՝ նա երկարեց մյուս ձեռքն ու քաղեց ելակը:

Ա՜խ, որքա՜ն քաղցր էր այն:

Իսկական բարգավաճում (ձեն առակ)

Մի մեծահարուստ մարդ

²ÝÑ³Ûï¿ §·ÇßªñÁ¦, ³ÝÍ³Ûñ¿ áõÕÇÝ

ëÏÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ

Երեւանի ֆիզիկայի ինստիտուտը ՄՀԵԿ-ի հետ երկար տարիների համագործակցության փորձ ունի. հայ մասնագետներն արդեն իսկ մասնակցել են արագացուցչի 3 մեծ գրանցիչի («Ատլաս», «Սի էմ էս», «Ալիս») ստեղծման աշխատանքներին: Կատարվելիք գիտափորձերին ինստիտուտի մասնագետները նույնպես մասնակցելու են: Հրաչյա Ասատրյանի



ԱՏԼԱՍ գրանցող սարքում պրոտոն-պրոտոն փոխազդեցության ժամանակ ծնվում են բազմաթիվ նոր մասնիկներ

հավաստմամբ՝ իրենք զբաղվելու են նաեւ կոլայդերի միջոցով ստացված տվյալների մշակմամբ. «Դրանք, ըստ հաշվարկների, այնքան շատ են լինելու, որ եթե մեկ տարվա բոլոր տվյալները պարունակող CD-ներ դրվեն իրար վրա, կստացվի 20 կմ բարձրություն»:

Կոլայդերի՝ միայն արագացուցչի եւ գրանցիչների վրա ծախսվել է մոտ 6 մլրդ շվեյցարական ֆրանկ, որը սակայն, ըստ Հ. Ասատրյանի, այնքան էլ մեծ գումար չէ, եթե հաշվի առնենք, որ ներդրումը կատարվել է աշխարհի տարբեր երկրների կողմից: Հայաստանը ֆինանսական ներդրում չի ունեցել, սակայն պատրաստել է «Ատլաս» գրանցիչի ռադիացիոն-ճառագայթային վահանը:

Մեծ հադրոնային կոլայդերի հիմնական նպատակը «հիքս» կոչվող մասնիկի հայտնաբերումն է: «Հիքսը նույն տիպի մասնիկ է, ինչպես մյուս մասնիկները՝ պրոտոնը, նեյտրոնը, էլեկտրոնը: Բայց հիքսը շատ կարճ կյանք ունեցող եւ ուժեղ փոխազդող մասնիկ է: Արտասովոր է նրանով, որ ունի բավական մեծ զանգված: Այդպիսի մեծ զանգված ունեցող մասնիկներ կարելի է հայտնաբերել շատ մեծ էներգիայի առկայության դեպքում: Կոլայդերի արագացուցչի էներգիան լիովին բավարար է, որ այդ մասնիկը հայտնաբերվի: Իսկ եթե հանկարծ չհայտնաբերվի, դա նշանակում է, որ տեսությունն ունի բավական լուրջ թերություններ», - ասում է Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի գիտության գծով տնօրենի տեղակալ Սարգիս Թարոյանը: Ֆիզիկոսը կարծում է, որ հիքսի հայտնաբերումը կարող է մարդկությանը եւ չարիք, եւ բարիք բերել՝ կախված այն բանից, թե պետություններն ինչպես կօգտագործեն հայտնագործությունը. «Հիսքսի հայտնաբերումը կօգնի ստեղծել այնպիսի զենքեր, որոնք կարող են ոչնչացնել դեպի երկիր շարժվող հսկայական երկնաքարեր»:

Կոլայդերի երկրորդ նպատակը տիեզերքի ծագման առեղծվածի հետ կապված հարցերի պատասխանները գտնելն է: Այսօր կարծում են, որ տիեզերքը բաղկացած է երեք տեսակի մատերիայից, որոնցից միայն մեկը՝ 4 տոկոսանոցն է տեսանելի: 23 տոկոսն անտեսանելի մատերիա է, 73 տոկոսը՝ անտեսանելի էներգիա: Հադրոնային կոլայդերի նպատակներից մեկը նաեւ այդ մատերիաների հայտնաբերումն է:

Հրաչյա Ասատրյանն ասում է, որ կոլայդերի միջոցով արված հայտնագործությունները մարդկությանը մի օր անպայման օգուտ կբերեն. «Սա հիմնարար գիտություն է: Հիմնարար գիտությունը տարբերվում է կիրառականից նրանով, որ սովորաբար նրա բերած օգուտները հնարավոր չէ կանխատեսել: Մարդկությունը շարժվում է առաջ հենց հիմնարար գիտության մեջ արվող հայտնագործությունների շնորհիվ: Դրանք ինչ-որ ժամանակ օգուտ կտան: Թե ե՞րբ՝ չգիտեմ»:



գրանցող սարքում Հիգս մասնիկի հայտնաբերումը կունենա այս տեսքը

Մեծ հադրոնային կոլայդերն այսօր աշխարհում ամենամեծ արագացուցիչն ունի, իսկ նախկին Խորհրդային Միության եւ այսօրվա ԱՊՀ-երկրների շրջանում ամենահզոր էլեկտրոնային արագացուցիչը գտնվում է Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում:

Եթե համեմատենք կոլայդերն ու հայկական «Արուս» արագացուցիչը, ապա մեր արագացուցչի էներգիան մոտ 10 հազար անգամ փոքր է: Այսօր «Արուսը», որի հիմնական նպատակը տարրական մասնիկների ուսումնասիրությունն է, չի գործում, թեեւ աշխատանքնային վիճակում է: Այն առաջին անգամ փորձարկվել է 1967



թվականին: Մինչեւ 1990 թվականն աշխատել է: «Խորհրդային Միության ժամանակ մենք տարեկան 20 խոշոր գիտափորձ էինք կատարում: Այն ժամանակ ունեինք մոտ 3000 աշխատող, հիմա մնացել են 500-ը: Դա այն կրիտիկական քանակն է, որից ցածրի դեպքում ինստիտուտը որպես ֆունկցիոնալ կառույց չի կարող գոյություն ունենալ»,- ասում է տնօրենի տեղակալ Սարգիս Թարոյանը:

Խորհրդային միության փլուզումից հետո արգացուցիչը երկու անգամ է աշխատել: Վերջին գիտափորձը կատարվել է 2005 թվականին: Տնօրենի հավաստմամբ՝ արագացուցիչը մեկ-երկու ամիս աշխատեցնելու համար 50-100 մլն դրամ է անհրաժեշտ:

«Արուսի» շառավղի լայնությունը 50, երկարությունը՝ 210 մետր է: Կազմված է ինժեկտորից, որտեղից էլեկտրոնները մտնում են օղակաձեւ արագացուցիչ, որտեղ էլ դրանք պտտվում են 210 մետր ուղեծրով ու արագանում մինչեւ 6 մլրդ էլեկտրոն վոլտ:

Հայկական արագացուցչի միակ վտանգը ճառագայթումն է, այդ պատճառով արգելվում է փորձարկման ժամանակ գտնվել սարքի թունելում: Թունելը պաշտպանված է բետոնային շերտով, եւ դրանից դուրս ճառագայթման վտանգ չկա:



Շահագործումն իրականացվում է ղեկավարման վահանակից, որը գտնվում է 30 մետր հեռավորության վրա: Սարքն անջատելուց հետո մնացորդային ճառագայթումն աննշան է, եւ միայն տեղային բնույթ է կրում, այսինքն՝ առկա է միայն այն մասերում, որտեղ էլեկտրոնների փունջ է դիպել:

Արագացուցիչը կառուցված է այնպես, որ երկրաշարժերի ժամանակ մագնիսական էլեմենտները եւ մյուս սարքավորումները ուղեծրի նկատմամբ չշարժվեն: 1988-ի երկրաշարժից հետո «Արուսը» շահագործվել է առանց բարդությունների:

Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում գործում են նաեւ կիրառական բնույթի փոքր արագացուցիչներ: Այսօր դրանցից մեկը զբաղվում է մալուխների արտադրությամբ: Մեկ ուրիշն էլ նախատեսվում է օգտագործել «ակտինիում 225» իզոտոպը ստանալու համար, որի միջոցով հնարավոր է քաղցկեղ բուժել: Ըստ տնօրեն Հ. Ասատրյանի՝ նախագիծը 17 մլն եվրո արժե, ու դրա իրականացումը կախված է պետությունից եւ Առողջապահության նախարարությունից:

Անի Ստեփանյան



Սև խոռոչի հայտնաբերումը

Սենգային խնդրեց ինչ-որ բան գրել, որպեսզի իր ընտանիքի բարգավաճումը շարունակվի սերնդից սերունդ: Սենգայը մեծ թուղթ վերցրեց ու գրեց.

«Հայրը մեռավ, որդին մեռավ, թոռը մեռավ»:

Մեծահարուստը զայրացավ.

- Ես քեզ խնդրեցի իմ ընտանիքի երջանկության համար ինչ-որ բան գրել: Ինչո՞ւ ես դու այսպիսի հիմար ձեւով կատակում:

- Ես չեմ պատրաստվում կատակել, - բացատրեց Սենգայը: - Եթե քո որդին քեզանից շուտ մեռնի, դա քեզ շատ կվշտացնի: Եթե քո թոռը քո որդուց շուտ մեռնի, ապա դա կկոտրի ձեր երկուսի սիրտը: Եթե քո ընտանիքում սերնդից սերունդ մեռնեն այն հաջորդականությամբ, որը ես եմ գրել, ապա դա կյանքի բնական ընթացք կլինի: Ես դրան իսկական բարգավաճում եմ անվանում:



***

(ծագումն անհայտ է)

Մի անգամ քամին ու արեւը վիճեցին, թե իրենցից ով է ավելի ուժեղ եւ գրազ եկան: Նրանք որոշեցին ստուգել իրենց կարողությունները եւ նայեցին ներքեւ: Ներքեւում, դաշտի միջով, վերարկուն հագած մի ծերուկ էր քայլում: Քամին ու արեւը որոշեցին, որ իրենցից նա, ով ավելի շուտ կկարողանա ծերուկին ստիպել հանել իր վերարկուն, կլինի ավելի ուժեղը: Առաջինը փորձեց քամին: Արեւը թաքնվեց ամպերի հետեւում, իսկ քամին սկսեց փչել՝ ինչքան ուժ ուներ: Բայց որքան ավելի ուժեղ էր փչում քամին, ծերուկն այնքան ավելի ամուր էր փաթաթվում իր վերարկուի մեջ: Այնուհետեւ դուրս եկավ արեւը եւ սկսեց շոգերով ջերմացնել ծերունուն: Քիչ անց ծերուկն հանեց վերարկուն:

Ասույթ
(սուֆիստական առակ)

Մեծ թագավորն իր մոտ կանչեց իր իմաստուններին: Նա հրամայեց նրանց. «Այնպիսի մի ասույթ մտածեք, որը կխաղաղեցնի ինձ: Երբ ես տխրեմ, թող այն ուրախություն պատճառի ինձ, իսկ երջանկության րոպեներին հիշեցնի տխրության մասին: Չափից շատ երկար չպետք է լինի, քանի որ ես ցանկանում եմ այն մշտապես ինձ հետ ունենալ»:

Իմաստունները խորհրդակցեցին թագավորական հրամանի շուրջ ու խոր մտածումների մեջ ընկան: Վերջապես նրանք վերադարձան ու թագավորին մի փոքրիկ զարդատուփ տվեցին: Նրանում մի մատանի էր, որի վրա այսպիսի բառեր էին փորագրված. «Սա եւս կանցնի»:

ԱՐՏԱԿԱՐԳ ... ժամանց

Անհեթեթ մահերի ժողովածու

«Մեռնելու 1001 հիմար ձեւ» գրքում հեղինակները ժողովել են 1001 յուրօրինակ ու արտառոց պատմություն՝ աշխարհի ամենաանհեթեթ մահերի մասին: Ահա հեղինակների ուշադրությանն արժանացած մի քանի ուշագրավ ու հետաքրքրիր պատմություն այն մասին, թե ինչ պետք չէ անել:

Մահ՝ ընկույզներից

Ամերիկացի Վիլլի Մերֆին հավանաբար շատ է վախեցել, երբ իր գլխին մի քանի տոննա արախիս է թափվել: Դեպքը տեղի է ունեցել 1993 թվականին, ԱՄՆ-ի Ջորջիա նահանգում: Ոչ ոք այդպես էլ չի իմանա, թե ինչ է Վիլլին զգացել այդ պահին, քանի որ նա չի կարողացել ողջ դուրս գալ արախիսի հսկայական «բլրի» միջից:

Մոռացկոտը

1988 թ. հայտնի սավառնորդ Իվան Մաքգուաերը հանդես է գալիս մի խենթ նախաձեռնությամբ: Նա որոշում է Հյուսիսային Կարոլինա նահանգում թռչել 3 հազար մետր բարձրությունից եւ իր թռիչքն անմահացնել տեսաժապավենի վրա: Բնականաբար, ցատկելիս նա իր հետ տեսախցիկ է վերցնում, իսկ այ, պարաշյուտը մոռանում է վերցնել...

Քաշող ուժը

Ճակատագիրն մեջքն է ցույց տվել Կարոլինա նահանգի բնակիչներից մեկին: Լողալիս 59-ամյա տղամարդն իր մարմնի ամենափափուկ մասով խրվել է լողավազանի ջուրը ներծծող խողովակի մեջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խողովակի ներքաշող ուժը 1 քառակուսի դյույմի վրա կազմում է շուրջ 136 կգ, ապա կարելի է ասել, որ փրկվելու ոչ մի հնարավորություն չի եղել:

Ոսկորը կոկորդում

1998 թ. Կամերունում Հենրի Մ'Բոնգոն փորձում է հերթական (ու ինչպես հետագայում պիտի պարզվեր՝ վերջին) անգամ տեղի գյուղերից մեկում հավ գողանալ: Բարկացած գյուղացիները գողին բռնում են ու ստիպում տեղում ուտել գողոնը: Խեղճը խեղդվում է կոկորդում մնացած հավի փետուրներից ու ոսկորներից:

Մարդասպան դագաղները

1982 թ. Ֆրանսիայում թաղման բյուրոյի սրահում շարված դագաղները շրջվում են այդ տխուր հիմնարկի սեփականատեր Մարկ Բուրջադի վրա: Վերջինս ստացած վնասվածքներից տեղում մահանում է: Նրան հողին են հանձնում՝ տեղավորելով նրան զգետնած դագաղներից մեկի մեջ:

Անհերքելի ապացույց

Որքա՞ն հեռու կարող է գնալ մարդը՝ ապացուցելու համար իր իրավացիությունը: Մեծ Բրիտանիայի Հեմփշիր կոմսության բնակիչ Մայքլ Թոյեն երեւի աշխարհում ամենից շատ ցանկանում էր ընկերոջն ապացուցել, որ «Ուայթ սփիրիթ» կոչվող լուծիչ նյութը կարող է այրվել: Անհավատին «դարձի բերելու» նպատակով, նա իր վրա է լցնում լուծիչն ու կրակի տալիս... Վեց օր հիվանդանոցում տանջվելուց հետո Մայքլը ստացած սարսափելի այրվածքներից մահանում է:

Մահ՝ անհարմար է ասել, թե ինչից

1996 թ. մի օր Հեմփշիրում բնակվող Մարկ Գլիսոնը որոշում է մի յուրօրինակ նվեր՝ խաղաղ գիշեր մատուցել հարեւաններին: Բանն այն է, որ Մարկի ահավոր բարձր խռմփոցը մշտապես խաթարում էր շրջապատի մարդկանց գիշերային անդորրը: Հարեւանների «երջանկությունը» լիակատար դարձնելու նպատակով, Մարկը քիթն է մտցնում... կանացի երկու միջադիր: Գիշերը նա ուղղակի շնչահեղձ է լինում ու մահանում:

Ավիավթար

2001 թ. Արիզոնա նահանգի բնակիչ Ռոջեր Ուոլեսին սպանում է սեփական փոքրիկ ռադիոկառավարվող մոդելինքնաթիռը: Օդանավի երկինք բարձրանալուց հետո արեւը կուրացնում է Ռոջերի աչքերը, եւ նա տեսադաշտից կորցնում է այն: Որպեսզի անց շուրջ 3 կգ կշռող եւ 65 կմ/ժ արագությամբ սլացող ինքնաթիռը հարվածում է նրա ճակատին:

Արջի ծառայություն

Բելգիայի ռազմաօդային ուժերի թույլ տված սխալի հետեւանքով Սուդանում երեք մարդ է մահանում: Իրականում բելգիական օդանավերը մարդասիրական առաքելություն էին իրականացնում, սակայն սննդամթերքով լի ծանր արկղերն օդանավից նետելուց հետո ընկնում են մարդկանց վրա եւ սպանում:

Ց՝ հաջորդ էջում

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» / Երգահան՝ ... Մելիքյան	⇨	Հայ գրող՝ ... Աղայան	⇨	Մտորմունք / Գրական ժանր	⇨	Սեղանին փռվող կտոր	⇨	⇩		⇩	
⇨				⇩			Քանդում, ավերում / Բառի տարր		Հայ գուսան		Անիծի մայրը / Գինու տեսակ
Հայ երգչուհի՝ ... Գասպարյան		Նահատակ / Ծաղիկ	⇨			Մեղմ, կամաց, հանդարտ	⇨	⇩		⇩		⇩
⇨		⇩			Թուքակի տեսակ	⇨					
Հայ բանաստեղծ / Քաղաք ՌԴ	⇨					Հյուսնի գործիք	⇨			Համեմունքային խոտաբույս	
⇨					Մալիի մ/քաղաքը / Ֆոտոյի սրբագրում	⇨				⇩	
Մեքենայի մաս / Պարան	⇨				⇩	Ռուսական միկրոավտոբուս		Վայրի ելակ / Շարժվել սառույցի վրայով	⇨		
⇨			Թեւավոր նժույգ / Երաժշտական լադ	⇨		⇩		⇩	Պոմիդոր		Քաղաք Շվեյցարիայում
Ամերիկյան կինոմրցանակ		Շտապել, աճապարել	⇩	Ցած գցել, կործանել	⇨				⇩		⇩
⇩	Կիսաթանկարժեք քար / Ճարտարապետ. տարր	⇨ ⇩					... սափիենս / Փոքրիկ պահարան	⇨			
⇨				Իսրայելի դրամը / Նյութի մասնիկ	⇨		⇩			Բնորոշ, առանձնահատուկ	
	Մուլտ՝ «... եւ Ջերի» / Գլխի փաթթոց	⇨		⇩	Երգչուհի՝ ... Միլյավսկայա	⇨				⇩	
⇨						Քաղաք Ֆրանսիայում		Մեր գեղեցիկ կեսը / Ապրանքանիշ	⇨		
	Հայախոս քրիստոնյա գնչու		Վատ, անարգ, նվաստ		Աչքի «վահանը» / Մարդկային ցեղ	⇨ ⇩		⇩	Սեղանի խաղ		Ձուկ բռնելու գործիք
Ռուս կրոնական աղանդի ներկայացուցիչ	⇩	Օպտիկական սարք	⇩ ⇨		⇩				⇩		⇩
⇨							Բանգլադեշի դրամը	⇨			
Ամերիկյան ավտոմոբիլ		Իլյա Մուրոմեցը ազգությամբ	⇨			Հյուրանոցային սենյակ	⇨				
⇨							Բռնակ	⇨			

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñÑñ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êà À

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý

ÜÏ³ñÇãª Üáñ³ÙñØ»ÉÇùÙ³Ý
Ò»ñ³íáñáÕª ì³ñ¹³Ý ¶ëå³ñÙ³Ý
êÙµ³ï ê³ñ·ëÙ³Ý
ºñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

Արտակարգ իրավիճակներ

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ՝ ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ՝ 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ՝435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ÙÙ³Ï³Ý՝ 1074,
ïå³ù³Ý³ÏÁ՝ 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության 25.9.2008 թ.